

**ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
գիտական խորհրդի՝ 31.03.2026 թ. կայացած նիստի թիվ 8 արձանագրություն**

Օրակարգ.

1. 2025-2026 ուս.տարվա 1-ին կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:
2. Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների հաստատում
3.2025 2026

ուս.տարում ամբիոնների կատարած աշխատանքների ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվություն/ 2 ամբիոն/:

4. Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դոցենտ,

բ.գ.թ. Անուշ Այունցի հեղինակած «Լոուրենս Դարբելի «Ալեքսանդրյան քառյակ»-

ի լեզվաբանաստեղծական գուգադրական ուսումնասիրություն (անգլերեն բեօրինակի և ֆրանսերեն թարգմանության հիման վրա)» վերնագրով մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

5. ERASMUS+Prove ծրագրի շրջանակներում VAKE բաղադրիչի ներմուծումը և ուսումնական պլանների հաստատում:

6. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի 36 անդամներից նիստին ներկա էին 24-ը: Դեկանի Ժ/պ Մարինե Յաղոբյանը ողջունեց գործընկերներին և անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ նշելով, որ ընդհանուր առմամբ սոց.հարցման արդյունքները գոհացուցիչ են: Օրակարգի երկրորդ հարցը միաձայն կերպով հաստատվեց:

Օրակարգի երրորդ հարցը՝ Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ.,պրոֆեսոր Հասմիկ Բաղդասարյանի և Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ.,պրոֆեսոր Շ.Պարոնյանի հաշվետվություններն էին:

ԼՍԵՑԻՆ՝ 2025–2026 ուս.տարում Ռոմանական բանասիրության ամբիոնի կատարած աշխատանքներին բերաբերող հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ բ.գ.թ.,պրոֆեսոր Հ. Բաղդասարյանը նշեց, որ ամբիոնն իր գործունեությունն իրականացրել է մի քանի ուղղություններով՝ ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական, ինչպես նաև միջազգային համագործակցության զարգացման ոլորտներում:

1. Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում առաջնահերթ են եղել դասավանդման որակի բարձրացումը՝ ծրագրային արդի պահանջներին համապատասխան,

իսպաներեն և իտալերեն լեզուների դասավանդման մեթոդների կատարելագործումը, ուսուցման բովանդակության արդիականացումը և թեստային առաջադրանքների բարելավումը:

2. Մույն ուստարում ամբիոնի աշխատանքի կարևոր բաղադրիչներից էր արտասահմանցի ճանաչված մասնագետների կողմից դասախոսների վերապատրաստման շարունակական գործընթացի ապահովումը՝ այդ թվում կրթական առցանց հարթակների կիրառմամբ: Այսպես, Վրաստանի իսպանագետների միջազգային ասոցիացիայի հետ համագործակցության շնորհիվ ամբիոնի իսպանական բաժնի դասախոսները 2025 թ. հոկտեմբերին առցանց ձևաչափով մասնակցել են վերապատրաստման դասընթացների, որոնք վարել են Վիգոյի, Բարսելոնի, Գրանադայի և այլ հեղինակավոր համալսարաններ՝ դասախոսներ: Նմանապես, «Էրազմուս+» ծրագրի շրջանակում կազմակերպվել է իտալական բաժնի դասախոսների վերապատրաստման 8-ժամյա դասընթաց, որը հոկտեմբերի 13–17-ը ԵՊՀ-ում անցկացրել են Վենետիկի Կա' Ֆոսկարի համալսարանի դասախոսներ՝ դոկտոր Գրացիանո Սեռաջոտոն և դոկտոր Կամիլիա Սպալիվիերոն:
3. Միջազգային համագործակցության զարգացման առումով կարևոր են այն սեմինարներն ու դասախոսությունները, որոնցով ամբիոնի դասախոսները հանդես են գալիս արտասահմանյան հեղինակավոր բուհերում: Այսպես, սույն թվականի փետրվարի 5-ին ամբիոնի պրոֆեսոր Հասմիկ Բաղդասարյանը առցանց ձևաչափով մասնակցել է Մադրիդի Կոմպլուտենսե համալսարանի կողմից կազմակերպված միջազգային սեմինարին և հանդես եկել «Մշակութային և լեզվական փոխանցման մարտահրավերներ. Գաբրիել Գարսիա Մարկեսի «Հարյուր տարվա մենությունը» հայերեն երկու թարգմանություններում» թեմայով ելույթով: Նմանապես, ամբիոնի դոցենտ Աննա Կուբանյանը առցանց ձևաչափով մասնակցել է ՌԴ Հարավային ֆեդերալ համալսարանի և Մեքսիկայի Վերակրուսի համալսարանի համատեղ կազմակերպած միջազգային առցանց V գիտաժողովին և հանդես եկել զեկուցմամբ: Ամբիոնի դասախոսները մասնակցել են նաև Հայաստանում կազմակերպված մի շարք միջազգային գիտաժողովների:
4. Ամբիոնի դասախոսները ներգրավվել են ոչ միայն տեղական, այլև միջազգային հեղինակավոր ամսագրերի խմբագրակազմերում, ինչպես նաև Իսպանիայում կազմակերպվող միջազգային գիտաժողովների գիտական կոմիտեներում: 2025–2026 ուստարում «Էրազմուս+» ծրագրի շրջանակում ամբիոնի ուսանողները սովորել են Կադիսի, Սանտիագո դե Կոմպոստելայի և Կաստիլյա-Լա Մանչայի համալսարաններում, իսկ դասախոսները հանդես են եկել դասախոսություններով տարբեր համալսարաններում:
5. Բարձրագույն կրթության աճող մրցունակության պայմաններում օտար լեզուների դասավանդման մեթոդների արդիականացման անհրաժեշտությունն առավել ընդգծված է: Այս նոր կրթական մարտահրավերներին դիմակայելու համար

իսպանական առաջատար բուհերի հետ համագործակցությունը դարձել է ժամանակի հրամայական: Այս համատեքստում կարևոր է Կադիսի, Գրանադայի, Մադրիդի Կոմպլուտենսե և Մադրիդի Ավտոնոմ համալսարանների հետ ակադեմիական, գիտական և մշակութային կապերի խորացումն ու զարգացումը, ինչպես նաև համագործակցության նոր հեռանկարների խթանումը: Նշված համալսարանների հետ համագործակցությամբ 2026 թ. հունիսի 23–24-ին ԵԼՀ ֆակուլտետում կկազմակերպվեն Իսպանական մշակույթի օրեր: Բացի այդ, Գրանադայի համալսարանի հետ մշակվում են գիտահետազոտական ծրագրեր «Հայաստանը իսպանախոս աշխարհում» թեմայի շուրջ:

6. Իտալիայի դեսպանատան հետ ակտիվ համագործակցության շնորհիվ 2023 թ. սեպտեմբերից ուսումնական գործընթացում ներգրավված է Իտալիայի ԱԳՆ-ի կողմից գործուղված լեզվակիր դասախոս Օռնելա Չիրիլոն, որի դերը կարևոր է ուսանողների բանավոր խոսքի և հաղորդակցական հմտությունների զարգացման, ինչպես նաև արտալսարանային և մշակութային գործունեության կազմակերպման գործում: Միաժամանակ շարունակվում են ջանքերը իսպանախոս լեզվակիր դասախոս հրավիրելու ուղղությամբ:
7. Ամբիոնի մասնագիտական գրականության հարստացման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները: Իտալիայի ԱԳՆ-ի և ՀՀ-ում Իտալիայի դեսպանատան հետ համագործակցության շնորհիվ 2025 թ. հոկտեմբերին ամբիոնի իտալական բաժինը ձեռք է բերել 40 անուն արդի մասնագիտական գրականություն: Այս գրքերը կնպաստեն իտալերեն լեզվի տեսական և գործնական դասընթացների որակի բարձրացմանը: Բացի այդ, Վիգոյի համալսարանի դասախոս, դոկտոր Մարիա Սենդես Սանտոսը ամբիոնին նվիրել է 180 գիրք:
8. Միջազգային քննությունների կազմակերպման առումով ամբիոնում շարունակվել է համագործակցությունը Մերվանտեսի ինստիտուտի հետ՝ «Իսպաներենը որպես օտար լեզու» միջազգային որակավորման քննության անցկացման ուղղությամբ՝ եվրոպական չափանիշներին համապատասխան: Քննությունը կազմակերպվել է 2025 թ. նոյեմբերի 21–22-ին, իսկ հաջորդը նախատեսվում է 2026 թ. մայիսի 21–22-ին: Նմանապես, Միենայի համալսարանի և Հայաստանում Իտալիայի դեսպանատան հետ համագործակցությամբ 2025 թ. դեկտեմբերի 5-ին, ինչպես նաև 2026 թ. ապրիլի 14-ին և հունիսի 16-ին կանցկացվի CILS միջազգային քննություն տարբեր մակարդակներով:
9. Գիտական հրատարակումներ: 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի դասախոսները պատրաստել են 10 գիտական հոդված, որոնցից մեկը հրատարակվել է Scopus-ի Q1 շտեմբարանում (H. Baghdasarián, N. Manukyan (2025): La mise en scène poétique dans les traductions du poème de *Heinrich Heine* « *Ein Fichtenbaum steht einsam* », *Hikma: Revista de traducción*, 24 (2), 1-34):
10. Մշակութային միջոցառումներ: 2025 թ. հոկտեմբերի 8-ին ամբիոնի իսպանական բաժնի ուսանողների համար կազմակերպվել է հանդիպում Գոնսալո Գուարչի հետ, որի

ընթացքում գրողը հանդես է եկել դասախոսությամբ իր ստեղծագործական ուղու և գրական գործընթացի առանձնահատկությունների վերաբերյալ:

Հոկտեմբերի 13-16-ը կազմակերպվել են միջոցառումներ Իտալերեն լեզվի XXV շաբաթվա շրջանակում՝ «Իտալախոս աշխարհ. լեզու առանց սահմանների» խորագրով Հոկտեմբերի 13-ին Իտալական շաբաթի բացման հանդիսավոր արարողությանը մասնակցել են ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալեսանդրո Ֆեռանտին և դեսպանատան ներկայացուցիչները, ինչպես նաև իտալացի հյուրեր:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ բ.գ.դ., պրոֆեսոր Հ.Բադրասարյանի 2025-2026 ուս.տարվա հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ 2025-2026 ուսումնական տարում Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնում կատարված ուսումնամեթոդական աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ բ.գ.դ., պրոֆեսոր Շ.Պարոնյանը նշեց, որ ամբիոնի նպատակն է պատրաստել անգլերենին տիրապետող հաղորդակցության բարձրակարգ մասնագետներ, որոնք կտիրապետեն մշակութային իրազեկության հիմնարար սկզբունքներին և կկարողանան արդյունավետ հաղորդակցվել տարբեր լեզվամշակույթների ներկայացուցիչների հետ՝ կիրառելով լեզուների հարմարակման մեխանիզմը: Նրանք կկարողանան արդյունավետ կիրառել անգլերեն բանավոր և գրավոր խոսքի գիտելիքներն ու հմտությունները հաղորդայնական տարբեր իրադրություններում, ինչպես նաև համացանցային եղանակով իրականացվող հաղորդակցություններում:

Ամբիոնը տարիներ շարունակ մեծ հաջողությամբ իրականացնում է «Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն)» կրթական ծրագիրը բակալավրիատում և «Միջազգային գործարար հաղորդակցության լեզվամշակույթ» կրթական ծրագիրը մագիստրատուրայում: Կատարած աշխատանքի հաջողության գրավականներից են դիմորդների կայուն աճը, ավարտական աշխատանքների, թեզերի փայլուն պաշտպանության արդյունքները, ինչպես նաև շրջանավարտների աշխատանքային գործունեության հաջողությունները, ուսանողների և շրջանավարտների դրական արձագանքները:

Ամբիոնի գերակա խնդիրներից մեկը մշտապես եղել է ուսուցման որակի բարելավումը և ուսանողների գիտելիքների ու հմտությունների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին: Ուստի այս տարի ևս ամբիոնի դասախոսների համար առաջնահերթ խնդիր է

եղել օտար լեզուների ուսուցման ժամանակակից մեթոդների, տարբեր առցանց հարթակների կիրառումը լսարանում և արտալսարանային աշխատանքների համար:

2022-23 ուստարվանից մեր ֆակուլտետում ուսումնառությունն իրականացվում է նորացված ուսումնական պլանով՝ կրեդիտատարության, ուսանողների ժամանակային բեռնվածության և, բնականաբար՝ նաև դասավանդող դասընթացների կրճատման, դասաժամերի նվազեցման ճանապարհով: Ինչ խոսք, այս ամենը ուսումնառության ռազմավարական ընթացքի փոփոխություն է պահանջում ինչպես դասախոսների, այնպես էլ՝ ուսանողների համար: Ուսանողների համար առաջին հերթին մեծանում է ինքնուրույն աշխատանք կատարելու անհրաժեշտությունը՝ գիտելիքները առավելագույնս խորացնելու նպատակով: Դասախոսներից էլ պահանջվում է ոչ միայն աշխատանքային պլանների վերանայում, գնահատման համար նախատեսվող առաջադրանքների և ռուբրիկների մշակում, այլ նաև՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքի վերահսկելի ուղղորդում: 2025-26 ուստարվա աշխատանքային պլաններում ներառվեցին նաև ինքնուրույն աշխատանքի ժամերը, իսկ բոլորովին վերջերս մենք ստացանք ինքնուրույն աշխատանքի տեսակների ժամանակատարությունը կարգավորող փաստաթուղթ, ինչը մեծ օգնություն է մեզ համար: Ամեն դեպքում, մենք բոլորս պետք է հասկանանք, որ ուսանողին ուսումնական նյութերով և առաջադրանքներով բեռնելու ծավալը պետք է վերահսկելի լինի: Ամբիոնն այս առումով շատ համակարգված է աշխատում, 1-ին և 2-րդ և 3-րդ կուրսերի մասնագիտակա՝ դասընթացների համար ստեղծվել են առարկայական ծրագրերի նոր պորտֆոլիոներ: Գալիք տարում կկազմվեն նաև 4-րդ կուրսի դասընթացների առարկայական պորտֆոլիոները: Դասընթացի ամբողջական փաթեթի ստեղծումը մեծապես հեշտացնում է դասախոսների աշխատանքը, քանի որ ստրատեգիական առումով, եթե դասախոսը պատկերացնում է, թե ինչ գիտելիք պետք է տա ուսանողին, ինչ պետք է պահանջի ուսանողից, ինչ վերջնաբայություն է պահանջվում տվյալ դասընթացից՝ նա ավելի ռացիոնալ է օգտագործում ժամանակը: Առավել ևս, երբ որևէ դասախոս նոր առարկա է սկսում դասավանդել, կարող է օգտվել ամբիոնում կազմված և մշակված ծրագրից և նյութերից: Անցյալ տարի բարձրաձայնեցինք «<շարժունության պատուհան>> ծրագրով պայմանավորված մի քանի խնդիրներ: Ինչ խոսք, կամընտրական առարկաների ինքնուրույն ընտրությունը շատ կարևոր է, քանի որ ուսանողը իր հետաքրքրությունների շրջանակում կարողանում է լրացնել որոշակի գիտելիքի բաց: ԵՊՀ ուսումնական բաժնի ջանքերով այս տարի բավականին բարելավվեց այդ գործընթացը, բայց խնդիրներ դեռևս կան, օրինակ՝ ուսանողներ, որոնք գրանցված են, բայց դասերին չեն հաճախում: Նաև՝ տեսականորեն ենթադրվում է, որ ծրագրի ղեկավարները պետք է ուղղորդեն ուսանողներին, բայց ուսանողները չեն դիմում նրանց:

Բակալավրի կրթական ծրագրում այս տարի ևս ունենք ամերիկացի դասախոսներ: Մեր համագործակցությունը Ամերիկայի դեսպանատան և Ամերիկյան Խաղաղության կորպուսի կրթական ծրագրերի բաժինների հետ տևական է և արդյունավետ: Հատկապես ցածր կուրսերի ուսանողների համար՝ լեզվակիրների օգնությամբ կատարվող գրավոր և բանավոր խոսքի հմտությունների զարգացումը, մշակութային իրազեկության գիտելիքների ձեռքբերումը կարևոր նշանակություն ունեն:

Ամբիոնը մեծ կարևորություն է տալիս 4-րդ կուրսի մասնագիտական պրակտիկային: Այս տարի ևս, COIL ծրագրով մեր բաժնի մոտ 25 և 40 բրազիլացի ուսանող մեր ամբիոնի և բրազիլացի դասախոսների խորհրդատվությամբ խառը խմբերով մասնակցել են մշակութային թեմայով պրոյեկտների ստեղծմանը: Ինչ խոսք, մեր ուսանողների համար դա միջմշակութային հաղորդակցության մեծ կենսափորձ և գիտելիքների հարստացում է եղել: Մեծ հաջողությամբ է անցել նաև Հայ Բարեգործական Հիմնադրամում մեր ուսանողների մասնակցությունը առցանց քուլեջի մշակութային ծրագրերին, ինչպես նաև <Ինլայթ>> ՀԿ-ում մեր ուսանողների պրակտիկան: Բհարկե, ցանկալի կլիներ պրակտիկայի անցկացման ավելի լայն հնարավորություններ ընձեռել ուսանողներին, և ամբիոնն աշխատում է այդ ուղղությամբ:

Ամբիոնը հայաստանյան բուհերից երևի միակն է, որ լեզվաբանական կրթության հետ համատեղ իրականացնում է մարքեթինգային հաղորդակցության հմտությունների ուսուցում: Ուստի մեր բաժնի ուսանողները ստանում են ներկայումս շատ պահանջված մասնագիտություններով աշխատելու հնարավորություն: Այդ առումով «Միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ» մագիստրոսական ծրագիրը թերևս հայաստանյան կրթական համակարգի ամենահաջողված ծրագրերից մեկն է: Ուսանողներն իրենց գիտահետազոտական պրակտիկան անցնում են SS և մարքեթինգային հաղորդակցության ոլորտի կազմակերպություններում և նրանցից շատերը պրակտիկան անցնելուց հետո ընդունվում են այդ և շատ այլ մարքեթինգային կազմակերպություններ աշխատանքի: Նրանց հետ պարբերաբար սեմինարներ են անկացնում բիզնեսի ոլորտում հաջողության հասած մարդիկ, բլոգերներ, մարքեթինգային հաղորդակցության ոլորտի մասնագետներ:

Ամբիոնի բակալավրիատի 2-րդ և 3-րդ կուրսի ուսանողները մեծ ակտիվությամբ մասնակցում են Էրազմուս+ շարժունության ծրագրին՝ ուսանելով Իտալիայում և Գերմանիայում:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնը ունեցել է հրաշալի նախաձեռնություններ, որոնք հաջողությամբ իրականացվել են: Ապրիլի 13-ին տեղի կունենա ամբիոնի ռազմավարական պլանավորմամբ նախատեսված մի շատ հետաքրքիր սիմպոզիում «Արհեստական բանականություն. հեռանկարներ և հնարավորություններ» խորագրով: Միմպոզիումի շրջանակներում նախատեսվում է անցկացնել պանելային քննարկում, կլինեն հետաքրքիր զեկուցումներ տարբեր մասնագետների կողմից և ինտերակտիվ վարժանքներ: Միմպոզիումին կմասնակցեն ԱԲ, մարքեթինգային հաղորդակցության և կրթական ոլորտների մասնագետներ, ինչպես նաև ամբիոնի ուսանողներ, դասախոսներ և տարբեր տարիների շրջանավարտներ, որոնք զեկուցումների, քննարկումների և գործնական ուսուցումների միջոցով իրենց գիտելիքները կհաղորդեն մեր ուսանողներին: Կարծում եմ, որ նման միջոցառումները կարևոր են նախ մեր կապը մեր շրջանավարտների հետ պահպանելու առումով, ապա նաև՝ մեր ուսանողներին մոտիվացնելու առումով:

Ապրիլ ամսին նախատեսվում է նաև համատեղ սեմինար-քննարկում անցկացնել ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողների հետ՝ հայ ազգային ինքնության,

մշակութային ժառանգության, լեզվի և գրականության մշակութային արժեքների գնահատման շուրջ:

Ամբիոնը սերտ կապեր է հաստատել MultiLingNet եվրոպական միջազգային ասոցիացիայի հետ, որտեղ ընդգրկված են միջմշակութային հաղորդակցության, բազմալեզվության և բազմամշակութայնության հարցերով զբաղվող համաշխարհային ճանաչում ունեցող լեզվաբաններ: Հոկտեմբերի 16-18-ը Շ.Պարոնյանը և ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ա. Այունցը զեկուցումով հանդես են եկել Իսպանիայի Լաս Պալմաս քաղաքում կայացած «International Conference on Multilingual and Multicultural Learning: Policies and Practices 4 (MMLPP 4)» խորագրով գիտաժողովին: Զեկուցումը վերաբերում էր Հայաստանում օտար լեզվի ուսուցման ընթացքում մշակութային իրազեկության զարգացման խնդիրներին և մեծ հետաքրքրությամբ ընդունվեց կոնֆերանսի մասնակիցների կողմից:

Ամբիոնը նաև սերտ կապեր է հաստատել Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի Կրթության և հասարակության ֆակուլտետի հետ: Հուլիսի 2-6-ը մեր ամբիոնի դասախոսները այցելեցին Լոնդոն, որտեղ զեկուցումներով մասնակցելու ենք «Language and Intercultural Communication» խորագրով սիմպոզիումին: Հույս ունենք պլանավորելու նաև պատասխան այց՝ կոնֆերանս ԵՊՀ-ում՝ ավելի ամրապնդելու կապերը մեր անգլիացի գործընկերների հետ: Դոցենտներ Մարինա Յաղուբյանը և Մարիաննա Օհանյանը աշնանը զեկուցումով հանդես են եկել Լեհաստանի Լյուբլին քաղաքի Յոն Փոլ Կաթոլիկ համալսարանում կազմակերպված գիտաժողովին: Հասմիկ Չալոյանը Բեռլինում մասնակցել է «Marketing Communication and Business Discourse: Perspectives and Challenges» գիտաժողովին:

Ամբիոնի դասախոսները պարբերաբար բարձրացնում են մասնագիտական գիտելիքները՝ մասնակցելով առերես և համացանցային եղանակով իրականացվող տարբեր սեմինարների, աշխատաժողովների, դասախոսությունների, մասնավորապես՝ Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպվող համաժողովներին և վերապատրաստման դասընթացներին, արտասահմանյան համալսարանների կողմից անցվելիք մասնագետների վերապատրաստման վեբինարներին, ԵՊՀ Շարունակական զարգացման Լենտրոնի կողմից կազմակերպվող որակավորման դասընթացներին: Հատկապես կարևորում եմ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ հայաստանյան գրասենյակի և ԵՊՀ Շարունակական կրթության կենտրոնի կողմից «ՄՈՒԿ հիմունքներ. դասավանդման մեթոդաբանություն» դասընթացին մի շարք դասախոսների մասնակցությունը: Սույն տարում հատկապես ԱԲ ոլորտին առնչվող թեմաներն են գերակայել: Մեր դասախոսները մասնակցել են «ռեԱրմենիա» ակադեմիայի հետ համատեղ ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնի 2025 թ. դեկտեմբերի 8-24-ը կազմակերպած «AI-ը կրթության ոլորտի համար. «AI քեզ բան» վերապատրաստման դասընթացին, որը դասախոսներին տրամադրել է գործնական գիտելիքներ արհեստական բանականության զարգացումների, AI տեխնոլոգիաների և մոտեցումների մասին, զարգացրել է նաև կրթական գործընթացում մի շարք AI գործիքների կիրառման հմտությունները: Ամբիոնի ասիստենտ Լուսինե Մադոյանը մասնակցել է ԱՄՆ դեսպանատան և Ամերիկյան

համալսարանի կողմից կազմակերպված «Building AI-Ready Classrooms: A Training of Trainers for English Language Educators» դասընթացին: Ձեռք բերելով գիտելիքներ ՄԲ գործիքը օտար լեզու դասավանդելու նպատակով կիրառելու ոլորտում՝ նա “AI or Die” խորագրով վերապատրաստման սեմինար-դասախոսությունների շարք է վարել ՀՊՏՀ-ում, ապա նաև՝ «ՄԲ գործիքների կիրառումը օտար լեզու ուսուցանելիս» վերապատրաստման դասախոսությունների շարք մեր ամբիոնի դասախոսների համար (8 ակադեմիական ժամ):

Ամբիոնի դոցենտ Մարինա Յաղուբյանը ներգրավված է Եվրահանձնաժողովի ERASMUS+Prove ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է վերափոխել Հարավային Կովկասի՝ Հայաստան ու Վրաստան բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդվող ուսումնական մոդուլները՝ ներդնելով արժեքների և գիտելիքի կրթություն (VaKE) բաղադրիչը նախադպրոցական, դպրոցական և բուհական կրթության մեջ՝ ստեղծելով նոր դասընթացներ կամ հարմարեցնելով գոյություն ունեցող դասընթացները: Այս ծրագիրն ունի նաև կարևոր գործնական ելք: Դրա շրջանակներում 2025 թվականի դեկտեմբերի 22-23-ը ամբիոնի դասախոսների համար:կազմակերպվեց երկօրյա ներքին դասընթաց (12 ակադեմիական ժամ), որը ներառում էր մի շարք կարևոր խնդիրներ, ինչպիսիք են՝

- VaKE մեթոդաբանության տեսական հիմքերը,
- դիլեմայի վրա հիմնված ուսումնական առաջադրանքների մշակում,
- էթիկական քննարկումների կազմակերպում ուսումնական գործընթացում,
- արժեհենակենտրոն ուսուցման գնահատման մոտեցումներ:

Ամբիոնի դասախոսները ոչ միայն կրեդիտներ ստացան տվյալ դասընթացին մասնակցելու համար, այլ նաև մեծ հետաքրքրվածություն արտահայտեցին իրենց դասավանդման պրակտիկայում տվյալ մեթոդաբանության կիրառման վերաբերյալ:

2026 թվականի մարտի 8-13-ը Մարինա Յաղուբյանը մասնակցել է նաև Հունաստանի Ֆլորինա քաղաքում կազմակերպված PROVE ծրագրի գործընկերների հանդիպմանը և ուսումնագիտական այցին, որի հիմնական նպատակն էր ամրապնդել գործընկեր համալսարանների համագործակցությունը, քննարկել ծրագրի ընթացքը և ներկայացնել VaKE (Values and Knowledge Education) մեթոդաբանության կիրառման փորձը կրթական գործընթացում: Ինչ խոսք, ԵՊՀ, մեր ֆակուլտետի և, ինչու չէ, մեր ամբիոնի համար Ֆլորինայում կազմակերպված հանդիպումը և ուսումնագիտական այցը կարևոր քայլ են գործընկեր համալսարանների միջև համագործակցության ամրապնդման, փորձի փոխանակման և VaKE մեթոդաբանության կիրառման զարգացման ուղղությամբ: Նշեմ նաև, որ այս ծրագրի շրջանակներում մայիսի կեսերին մեր բաժնի 2-րդ կուրսի 2 ռուսաևոլ մեկնելու է Վրաստան :

Անդրադառնալով ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքներին՝ նշվեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է 19 հոդված Հայաստանում և արտասահմանում, որոնցից 6-ը՝ «Սկոպուս» գիտական ամսագրերի համակարգում, տպագրվել է 1 ուսումնական ձեռնարկ:

Դասախոսները մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել միջազգային և տեղական գիտաժողովներում (միջազգային գիտաժողովներում՝ 1 մասնակցություն, 7

զեկուցում, տեղական գիտաժողովներում՝ 1 մասնակցություն, 1 զեկուցում), տեղական սիմպոզիումի /17 մասնակցություն /, առցանց վեբինարների /8/ և դասընթացների /27/, ինչպես նաև առերես վերապատրաստման դասընթացներին /18/:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միջմշակութային հաղորդակցության անզերենի ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ. պրոֆեսոր Շ.Պարոնյանի հաշվետվությունը գնահատել դրական: Որոշումն ընդունվեց միաձայն:

Լսեցին՝

Միջմշակութային հաղորդակցության անզերենի ամբիոնի Բ.Գ.Պ., դոցենտ Անուշ Այունցի հեղինակած «Լուրենս Դարբելի «Ալեքսանդրյան քառյակ»-ի լեզվաբանաստեղծական զուգադրական ուսումնասիրություն (անզերեն բնօրինակի և ֆրանսերեն թարգմանության հիման վրա)» վերնագրով մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

Արտահայտվեցին՝

Միջմշակութային հաղորդակցության անզերենի ամբիոնի վարիչ Շ. Պարոնյանը ներկայացրեց Ա. Այունցի հեղինակած մենագրությունը՝ ներկայացնելով աշխատանքի արդիականությունը, նորույթը և գիտական արժեքը: Նշվեց, որ մենագրությունը զուգադրական վերլուծության և տեսական հերմենևտիկայի ոլորտներում իրականացված կարևոր և արդիական հետազոտություն է: Առանձնահատուկ ուշադրության արժանացավ անզերեն բնօրինակի և ֆրանսերեն թարգմանության զուգադրական վերլուծությունը, որը հնարավորություն է տալիս դարտարկել ոչ միայն լեզվական տարբերություններն ու խաչաձև ազդեցությունները, այլև պատկերավորության առկայացման հիմնախնդիրները:

Շ. Պարոնյանը նշեց, որ մենագրությունը կարևոր ավանդ է գեղարվեստական խոսքի լեզվաոճական քննության ոլորտում, քանի որ ստեղծագործողի կողմից կիրառվող ոճական հնարների պատկերավոր և արտահայտչական գործառույթները բացահայտելու նպատակով հեղինակը համադրում է հերմենևտիկայի և լեզվաբանաստեղծական վերլուծության մոտեցումները: Նա շեշտեց նաև, որ մենագրությունը կարևոր ներդրում է գեղարվեստական գրականության լեզվի, ոճի և պատկերավորության ուսումնասիրության մեջ:

Որոշեցին՝

Երաշխավորել Միջմշակութային հաղորդակցության անզլերենի ամբիոնի բ.գ.թ., դոցենտ Անուշ Այունցի հեղինակած «Լուուրենս Դարբելի «Ալեքսանդրյան քառյակ»-ի լեզվաբանաստեղծական գուգադրական ուսումնասիրություն (անզլերեն բնօրինակի և ֆրանսերեն թարգմանության հիման վրա)» վերնագրով մենագրությունը տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՄԵՑԻՆ՝ «Միջմշակութային հաղորդակցություն (անզլերեն)» կրթական ծրագրի 4-րդ կուրսի «Հանրալեզվաբանություն և մշակույթ» դասընթացի շրջանակներում «Արժեքների և գիտելիքի միջոցով կրթության» (*Values and Knowledge Education - VaKE*) բաղադրիչի ներդրումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵԼՀ ֆակուլտետի դեկանի Ժ/պ բ.գ.թ., դոցենտ Մարինե Յաղուբյանը առաջարկեց ներդնել «Միջմշակութային հաղորդակցություն (անզլերեն)» կրթական ծրագրի 4-րդ կուրսի «Հանրալեզվաբանություն և մշակույթ» դասընթացի շրջանակներում «Արժեքների և գիտելիքի միջոցով կրթության» (*Values and Knowledge Education - VaKE*) բաղադրիչը: Ուսումնական գործընթացում երկրնտրանքների (դիլեմաների) վրա հիմնված առաջադրանքների, էթիկական քննարկումների և արժեհենքային ուսուցան գնահատման մեթոդաբանության կիրառումը կնպաստի սովորողների ուսումնական փորձառության բարելավմանը, կխթանի դասավանդման և ուսումնառության արդիականացումն ու նորարարությունը, ինչպես նաև կօժանդակի առաջավոր փորձի տարածմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել «Միջմշակութային հաղորդակցություն (անզլերեն)» կրթական ծրագրի 4-րդ կուրսի «Հանրալեզվաբանություն և մշակույթ» դասընթացում «Արժեքների և գիտելիքի միջոցով կրթության» (*VaKE*) բաղադրիչի ներդրման վերաբերյալ առաջարկը: Որոշումն ընդունվեց միաձայն:

Ընթացիկ հարցեր

Միաձայն որոշմամբ հաստատվեց հետևյալ կրթական բլոկների փոփոխությունները:

Կիրառական հաղորդակցություն (նախկին «Անզլերեն և քաղաքակրթություն» բլոկի փոխարեն):

Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն (նախկին «Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն՝ իսպաներեն և հայերեն» բլոկի փոխարեն):

«Անգլո-ամերիկյան քաղաքակրթություն» առարկայի 9 կրեդիտը դարձնել 3 և դասավանդումը կազմակերպել անգլերեն (3 կրեդիտ, 30 ժամ, տեսական):

«Մպորտային անգլերենի բառապաշարը» առարկան (3 կրեդիտ) վերանվանել «Իտալերենը և անգլերենը հաղորդակցական տարբեր ոլորտներում», և այս դասընթացը շարձնել երկլեզու (իտալերեն և անգլերեն), երկմոդուլ և 9 կրեդիտ (60 ժամ իտալերեն, տեսական և 30 ժամ անգլերեն, տեսական):

«Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն» բլոկում առաջարկվում է 6-րդ կիսամյակի «Իտալերեն ՁԼՄ-ների լեզու և թարգմանություն» առարկան (3 կրեդիտ) դարձնել «Միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն» (3 կրեդիտ, 30 ժամ, անգլերեն, տեսական):

«Կիրառական հաղորդակցություն» բլոկում՝ 15, իսկ «Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն» բլոկում՝ 6 կրեդիտ:

Կիրառական հաղորդակցություն (նախկին «Անգլերեն և քաղաքակրթություն» բլոկի փոխարեն):

Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն (նախկին «Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն՝ իսպաներեն և հայերեն» բլոկի փոխարեն):

Առաջին՝ «Կիրառական հաղորդակցություն» (այսինքն՝ նախկին «Անգլերեն և քաղաքակրթություն») բլոկում առաջարկվում է 2024/2028 ուստարվա ուսումնական պլանում կատարել հետևյալ փոփոխությունները, և դրանք պահպանել հետագա բոլոր ուստարիների ուսումնական պլաններում՝ 2025/2029, 2026/2030 և այլն.

«Անգլո-ամերիկյան քաղաքակրթություն» առարկայի 9 կրեդիտը դարձնել 3 և դասավանդումը կազմակերպել անգլերեն:

«Մպորտային անգլերենի բառապաշարը» առարկան (3 կրեդիտ) վերանվանել «Իսպաներենը և անգլերենը հաղորդակցական տարբեր ոլորտներում», և այս դասընթացը շարձնել երկլեզու (իսպաներեն և անգլերեն), երկմոդուլ և 9 կրեդիտ:

Երկրորդ՝ «Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն» բլոկում առաջարկվում է 6-րդ կիսամյակի «Իսպաներեն ՁԼՄ-ների լեզու և թարգմանություն» առարկան (3 կրեդիտ) դարձնել «Միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն» (3 կրեդիտ), և այդ առարկան դասավանդել անգլերեն լեզվով, ինչպես նաև նշված փոփոխությունը պահպանել հետագա բոլոր ուստարիների ուսումնական պլաններում՝ 2025/2029, 2026/2030 և այլն: Նմանապես, առաջարկվում է 8-րդ կիսամյակի «Միջմշակութային հաղորդակցության տեսություն» առարկան դարձնել «Տեսալսողական հաղորդակցություն» (3 կրեդիտ):

Այս փուլում 2 բլոկներում փոփոխված կրեդիտների քանակն է 18, այդ թվում՝ «Կիրառական հաղորդակցություն» բլոկում՝ 15, իսկ «Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն» բլոկում՝ 6 կրեդիտ:

2026/2027 ուստարում վերոհիշյալ ուսումնական պլաններում առաջարկվում են կատարել հետևյալ փոփոխությունները՝ կրթամասերի ընդհանուր ուղղվածությունը պահպանելու համար:

Առաջին՝ «Կիրառական հաղորդակցություն» բլոկում «Անգլերենը որպես համացանցային հաղորդակցության միջոց» առարկան վերանվանել «Մեդիա և հաղորդակցություն» (երկլեզու, 9 կրեդիտ):

«Անգլերենը ֆիլմերում» առարկան դարձնել «Գործարար հաղորդակցության հիմունքներ» (երկլեզու), (6 կրեդիտ):

Երկրորդ՝ «Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն» բլոկում 7-րդ կիսամյակի «Իսպաներենը միջազգային հարաբերություններում» առարկան վերանվանել «Իսպաներենը և անգլերենը միջազգային հարաբերություններում» (երկլեզու, 9 կրեդիտ):

«Անգլերեն, ֆրանսերեն և հաղորդակցություն» կրթական ծրագրում առաջարկվող փոփոխությունները, որոնք մասնագիտական երկու երկլեզու կառուցամասերն են՝

1. Կիրառական և գործարար հաղորդակցություն (36 կրեդիտ)

2. Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն (36 կրեդիտ)

- Առաջին կառուցամասի վերնագիրը և էությունը հարմարեցվել է մեր մագիստրատուրայի ծրագրին՝ վերանվանվելով «Կիրառական և գործարար հաղորդակցություն»: Հիմնականում դասավանդելու են հրավիրյալ, երկլեզու (անգլերեն ու ֆրանսերեն) դասախոսներ, միայն մի առարկա է մնում անգլերեն:
- Երկրորդ կառուցամասի վերնագիրն («Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն») ու էությունը պահպանվել են, ավելացվել են մի քանի բանասիրական-հումանիտար առարկաներ: Բոլոր առարկաները երկլեզու են, միայն մեկն է մնում ֆրանսերեն:

Սույն տարում (2026-2027 ուստարի) յուրաքանչյուր կառուցամասում 10% (21 կրեդիտ) ծավալի սահմանում առաջարկում ենք իրականացնել հետևյալ փոփոխությունները **2024-2028** ուստարվա ուսումնական պլանում՝ 21 կրեդիտի չափով առաջին կառուցամասում և 15 կրեդիտի չափով երկրորդ կառուցամասում:

Կառուցամաս 1՝ Կիրառական և գործարար հաղորդակցություն

21 կրեդիտի փոփոխություն՝ երեք նոր, երկլեզու առարկայի ներմուծում

- 6-րդ կիսամյակի «ՀԲ անգլո-ամերիկյան քաղաքակրթություն» առարկան 9 կրեդիտից դարձնել 6 կրեդիտ և փոխել վերնագիրը՝ «Հանրային հաղորդակցություն և փափուկ հմտություններ» (6 կրեդիտի փոփոխություն)
- 6-րդ կիսամյակի «Մպորտային անգլերեն» առարկան 3 կրեդիտից դարձնել 6 և փոխել վերնագիրը՝ «Բիզնեսի զարգացման ներածություն և հաղորդակցություն» (6 կրեդիտի փոփոխություն)
- 7-րդ կիսամյակի «Անգլերենը որպես համացանցային հաղորդակցության միջոց» առարկան (9 կրեդիտ) անվանափոխել առանց կրեդիտի փոփոխության՝ «Մարդկային ռեսուրսների և կազմակերպության կառավարում» (9 կրեդիտի փոփոխություն):
- «Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի փոփոխությունները:

Երկու կառուցամասերը դարձնել երկլեզու երկու մասնագիտացմամբ՝

1. Կիրառական հաղորդակցություն (36 կրեդիտ)
2. Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն (36 կրեդիտ)

«Կիրառական հաղորդակցություն» (նախկին «Անգլերեն և քաղաքակրթություն») կառուցամասում առաջարկում ենք 2024/2028 ուստարվա ուսումնական պլանում կատարել հետևյալ փոփոխությունները, և դրանք պահպանել հետագա բոլոր ուստարիների ուսումնական պլաններում՝ 2025/2029, 2026/2030 և այլն.

Կառուցամաս 1. «Կիրառական հաղորդակցություն».

21 կրեդիտի փոփոխություն՝ երեք նոր, երկլեզու մոդուլային առարկայի ներմուծում.

- 6-րդ կիսամյակի «ՀԲ Անգլո-ամերիկյան քաղաքակրթություն» 9 կրեդիտից դարձնել ՀԲ «Կիրառական հաղորդակցության հիմունքներ» դասընթաց, 6 կրեդիտ /6 կրեդիտի փոփոխություն/ (երկլեզու մոդուլային),
- 6-րդ կիսամյակի «Մպորտային լեզու» դասընթացը 3 կրեդիտից դարձնել 6 և վերանվանել այն «Մեդիավերլուծություն», /6 կրեդիտի փոփոխություն/ (երկլեզու մոդուլային),
- 7-րդ կիսամյակի «Անգլերենը համացանցային լեզու» դասընթացը /9 կրեդիտ/ դարձնել «Թվային հաղորդակցություն» 9 կրեդիտ (երկլեզու, մոդուլային):

Կառուցամաս 2. «Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն».

18 կրեդիտի փոփոխություն: Դասընթացներից երկուսը երկլեզու են և մոդուլային, մեկը՝ գերմաներեն.

- 6-րդ կիսամյակի «Թարգմանության տեսություն և պրակտիկա» դասընթացի 3 կրեդիտը դարձնել «Թարգմանության տեսություն և պրակտիկա» 6 կրեդիտ (3 կրեդիտի փոփոխություն, երկլեզու մոդուլային),

- 6-րդ կիսամյակի «Միջմշակութային երկխոսություն և թարգմանություն» 9 կրեդիտ դասընթացը դարձնել ՀԲ «Միջմշակութային երկխոսություն և թարգմանություն» 6 կրեդիտ (3 կրեդիտի փոփոխություն, երկլեզու մոդուլային),

- 7-րդ կիսամյակի «Մշակութային հաղորդակցություն և բանավոր թարգմանություն» 9 կրեդիտ դասընթացը դարձնել «Գրականություն և գեղարվեստական թարգմանություն» 9 կրեդիտ (երկլեզու մոդուլային),

- 8-րդ կիսամյակի «Գործարար գերմաներեն» դասընթացը /3 կրեդիտ/ դարձնել «Մասնագիտական տեքստերի թարգմանություն» 3 կրեդիտ: Դասընթացը զեաներեն է:

2026/2029 ուստարվա ուսպլաններում առաջարկվում է կատարել հետևյալ փոփոխությունները՝ կրթամասերի ընդհանուր ուղղվածությունը պահպանելու համար:

Կառուցամաս 1. Կիրառական հաղորդակցություն

- 7-րդ կիսամյակի «Տուրիզմ և հաղորդակցություն» /6 կրեդիտ/ դարձնել «Գործարար հաղորդակցության հմտություններ» /6 կրեդիտ/, (երկլեզու մոդուլային),

- 8-րդ կիսամյակի «Անգլերենի քաղաքական դիսկուրս» դասընթացը /3 կրեդիտ/ դարձնել «Հանրային հաղորդակցություն» 3 կրեդիտ, (անգլերեն)

- 8-րդ կիսամյակի «Անգլերենը ֆիլմերում» /6 կրեդիտ/ դարձնել «Գիտական հաղորդակցություն» /6 կրեդիտ/, (երկլեզու մոդուլային):

Կառուցամաս 2 . Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն

- 8րդ կիսամյակում «Լսատեսողական արվեստների թարգմանություն» 6 կրեդիտի դասընթացը թողնել նույնը, դարձնելով այն երկլեզու և մոդուլային՝ «Լսատեսողական արվեստների թարգմանություն» 6 կրեդիտ:

Կառուցամաս 1. Կիրառական հաղորդակցություն

5 երկլեզու , 1 անգլերեն, անգլ. 18 կ + գերմ. 18կ.

6-րդ կիսամյակ

Կիրառական հաղորդակցության հիմունքներ 6 կրեդիտ

Մեդիավերլուծություն 6 կրեդիտ

7-րդ կիսամյակ

Թվային հաղորդակցություն 9 կրեդիտ

Գործարար հաղորդակցության հմտություններ 6 կրեդիտ

8-րդ կիսամյակ

Հանրային հաղորդակցություն /Public communication/ 3 կրեդիտ
Գիտական հաղորդակցություն 6 կրեդիտ

Կառուցամաս 2. Թարգմանչական գործ և միջմշակութային հաղորդակցություն
6-րդ կիսամյակ

Թարգմանության տեսություն և պրակտիկա՝ 6 կրեդիտ

ՀԲ Միջմշակութային երկխոսություն և թարգմանություն՝ 6 կրեդիտ
7-րդ կիսամյակ

ԶԼՄ-ների լեզու և թարգմանություն՝ 6 կրեդիտ

Գրականություն և գեղարվեստական թարգմանություն՝ 9 կրեդիտ
8-րդ կիսամյակ

Մասնագիտական տեքստերի թարգմանություն՝ 3 կրեդիտ

Լսատեսողական արվեստների թարգմանություն՝ 6 կրեդիտ:

«Անզլերեն լեզու և գրականություն» բակալավրի կրթական ծրագրի բարելավման, ուսանողների գիտելիքների բազմակողմանի զարգացումը, քննադատական մտածողության և գենդերային տեղեկացվածության բարձրացումը ապահովելու նպատակով առաջարկվում է «Արևմտյան եկեղեցիների փոխհարաբերությունների պատմություն» (5-րդ կիսամյակ, 3 կրեդիտ) առարկայի փոխարեն ներդնել «Գենդեր և գրական դիսկուրս» (5-րդ կիսամյակ, 3 կրեդիտ) առարկան : Ինչպես նաև «Անզլերեն և գրականություն» ծրագրում առկա «Զբոսաշրջային գովազդ և դրա առանձնահատկությունները» դասընթացի լրիսարեն ներդնել «Պրագմա-ռճագիտություն և գեղարվեստական տեքստ» դասընթացը:


ԵԼՀ ֆակուլտետի դեկանի ժ/պ և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝

Մ. Հ. Յաղուբյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝

Մ. Գ. Բալայան



31.03.2026թ.